

**ՏՆԱՅԻՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (IN-HOME SUPPORTIVE SERVICES) ԾՐԱԳԻՐ**

**ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԽՆԴՐԱՆՔԻ ՊԱՏԱՍԽԱՆԻ ՆԱՄԱԿ ՍՏԱՑՈՂԻՆ՝ ՉՈՐՐՈՐԴ ԽԱԽՏՈՒՄԸ (ԱՆԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ ՄԵՎ ՏԱՐՈՎ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(ADDRESSEE)

ՎԱՐՉԱՇՐՋԱՆ՝ \_\_\_\_\_

Ծանուցման ամսաթիվը՝ \_\_\_\_\_

Մատակարարողի անունը՝ \_\_\_\_\_

IHSS գրասենյակի հասցեն՝ \_\_\_\_\_

IHSS գրասենյակի հեռախոսահամարը՝ \_\_\_\_\_

Ում՝ Տնային աջակցության ծառայությունների (IHSS) ստացողին

Այս ծանուցմամբ տեղեկացնում ենք ձեզ, որ մենք ուսումնասիրել ենք Նահանգային վարչական վերանայման խնդրանքը, որը ձեր մատակարարողը

ներկայացրել էր \_\_\_\_\_ ամսին չորրորդ խախտում ստանալուց հետո, և այս ծանուցման ամսաթվի դրությամբ՝ խախտումը հաստատված է: Այս որոշումը հիմնված է ձեր մատակարարողի կողմից ներկայացված Նահանգային վարչական վերանայման խնդրանքի մեր ուսումնասիրության վրա: Այս խնդրանքում բավարար փաստեր չկան՝ ցույց տալու համար, որ նա համապատասխանում է չափանիշներին, որոնք պահանջում են աշխատել ավելի շատ ժամեր, քան թույլ է տալիս նրա աշխատանքային շաբաթվա պայմանագիրը: **Ձեր մատակարարողը կշարունակի չորրորդ խախտում ունենալ, քանի որ նա**

- Աշխատել է 40 ժամից ավել աշխատանքային շաբաթում ստացողի համար՝ առանց վարչաշրջանի հավանության, երբ այդ ստացողի առավելագույն շաբաթական ժամերը կազմում են 40 ժամ կամ ավելի քիչ:
- Աշխատել է ստացողի առավելագույն շաբաթական ժամերից ավել՝ առանց վարչաշրջանի հավանության, և դրա հետևանքով ձեր մատակարարողն ավելի շատ արտաժամյա աշխատանք է կատարել ամսվա ընթացքում, քան նա սովորաբար կաներ:
- Աշխատել է ավելի քան 66 ժամ մեկ աշխատանքային շաբաթում, երբ Ձեր մատակարարողն աշխատում է մեկից ավել ստացողների համար:
- Հայցել է 7 ժամը գերազանցող ճամփորդության ժամանակ մեկ աշխատանքային շաբաթում:

Այս ծանուցման ամսաթվից 20 օրացուցային օր անց մեկ տարի ժամկետով կդադարեցվի IHSS ծառայություններ մատուցելու ձեր մատակարարողի իրավասությունը:

Նախքան ձեր մատակարարողը կկարողանա վերադառնալ IHSS մատակարարողի աշխատանքին, նրանից պահանջվում է կրկին լրացնել մատակարարողի անդամագրման բոլոր ձևերը, ներառյալ քրեական կենսագրական տվյալների ստուգում, մատակարարողի կողմնորոշում, ինչպես նաև լրացնել բոլոր այլ պահանջվող ձևերը:

Եթե դուք աջակցության կարիք ունեք նոր մատակարարող գտնելու հարցում, մինչև ձեր մշտական մատակարարողն իրավասու դառնա կրկին ծառայություններ տրամադրել, խնդրում ենք կապվել ձեր վարչաշրջանի IHSS գրասենյակի հետ:

Եթե դուք վստահ չեք, թե որ օրը ձեր մատակարարողն իրավասու կլինի դառնալու IHSS մատակարարող, կամ եթե հարցեր ունեք այս ծանուցման վերաբերյալ, խնդրում ենք կապվել ձեր վարչաշրջանի IHSS գրասենյակի հետ: